

# Հնչակեան Պատմութեան Էջերէն

## ԲԱԳՐԱՏ ՄԻՒՆԻՔԻ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

Բ.

Հնչակեանները Մարքսիստական յեղափոխական հեռատեսութեամբ իրենց յոյսը կը կապեն ռուսական նոր կարգերուն եւ կը սպասեն դէպքերու զարգացման:

Հնչակեան կեդրոնի հրահանգով ընկեր Գազանճեանը կը լիագործի կազմակերպել գորագունը մը վճարական վայրկեանը օգտագործելու նպատակով: Ընկ. Հայկ Բժշկեան կը մեկնի Պարս, ապա, կ'անցնի Մոսկուա եւ կը ստանձնէ Արեւմտեան ճակատի հեծելազորաց հրամանատարութիւնը:

Ընկերներ Տաշիր եւ Սիւնիք կը մեկնին Երեւան մօտէն հետեւելու Հայաստանի Հանրապետութեան: Սիւնիքը կը յաջողի արտաքին գործերու մէջ քարտուղարական պաշտօն մը ձեռք բերել եւ դիտել այն դրժբայտ անցքերը, որոնք հայ ժողովուրդը պիտի ենթարկէին բացարձակ կորստեան, եթէ ընկ. Ստեփան Շահումեանը չփութար Կովկաս:

Մինչ այդ սակայն, ընկեր Սիւնիքը չափազանց ազդելով դաւաճանքին Կարսը թրքաց յանձնելուն եւ հայ գաղթականներու դժբախտ վիճակին, մինչպէս նաեւ օրուան իշխանութիւններուն թրքաց հետ վարած բանակցութիւններէն, կը ձգէ Երեւանը եւ կ'անցնի Թիֆլիս:

Հակառակ Վրացեանի բաժան ջանքերուն, վերջ ի վերջոյ օրուան դաշակցական կառավարութիւնը իր կայունութեան գետի մը կորսնցուցած ըլլալով կը ստիպուի լքել Երեւանը եւ պետական գանձը շարժել կ'անցնի Պարսկաստան... Խորհրդայնացած Վրաստանէն կարմիր ալիքը կը հեղեղէ Հայաստանը եւ կ'ազատագրէ բազմաչարչար հայութեան հայրենիքը հաստատելով խորհրդային կարգերը:

Պատմական անհերքելի ճշմարտութիւն է, որ Հայաստանի Հանրապետութեան ժամանակաշրջանին Ռիլլընեան սահմաններով Թրքարաւոսում Թուրքիոյ թողելէն զատ, Արարատեան հանրապետութեան հողամասերէն Կարսը, Արտահանը եւ Սիւրմալուն տրուած էր թորքերուն, եւ պատմական Հայաստանի սիրտը կազմող Արարատն ու Անին կ'իյնային թրքական գերիշխանութեան մերթն:

Այսպիսի անողորմ եւ անիրաւ կատարւածին ի տես, Հնչակեան Կեդրոնական Վարչութիւնը յարմար առիթ կը համարէ պատուիրակութիւն մը ուղարկել Մոսկուա եւ Լենինի խնդրանք մատուցանել, թուրքերէն խլուած հայկական հողամասերը վերստանալու եւ կցելու Հայաստանին: Այս պատուիրակութեան մէկ անդամն էր ընկեր Բագրատ Սիւնիքը:

Պատուիրակութիւնը Մոսկուայի Պետական պանդոնին մէջ կը հիւրասիրուի Լենինի հրահանգով եւ կը մնայ պետութեան հիւրը 21 օր: Պատուիրակութիւնը քանիցս անգամներ խորհրդակցութիւն կ'ունենայ Լենինի հետ եւ մանրամասնօրէն կը հարդորդել կովկասեան ազգամիջեան անցքերը, գաղութեան հայոց ողորմելի կացութիւնը, թրքական բռնազրտութեան մը վայրագութիւնները գիւղացի եւ աշխատատեղ ժողովուրդներու վրայ:

Հայկական վիրաւոր հարցը իր բոլոր մանրամասնութիւններով կը ներկայացուի Լենինի: Վերջինս յետ երկար ընմարկութեան կը հաւանի. «Հայկական հողամասերու ազատագրման պատմական փորձերը պիտի զայ եք կատարենք դէպքերը, երբ խորհրդային կարգերը ամրանան մասնակցութեան մարզին մէջ: Եւ դա պիտի իրագործուի ապահովաբար»: Լենինը խորհրդային գրականութեան վերաբերելով մէկ անտուկ գիրքեր կը նուիրէ հնչակեան պատուիրակութեան եւ կը յանձնարարէ տեսնել մասն Լենին Թրոքսին: Ան խորհուրդ կու տայ հնչակեան պատուիրակութեան Թրոքսին խօսիլ հայ գաղթականութեան դժբախտ կացութեան ինչպէս նաեւ թրքական վայրագութեանց մասին:

Հնչակեան պատուիրակութիւնը ստան ընդունութեան կ'արժանանայ Թրոքսինէ: Թրոքսին՝ հնչակեան առաջադրութիւնը կ'որակէ «ազգայնական միտման եւ ժամանակի ոգիին անհամապատասխան քայլ»: Սիւնիքի դարաբաղեան ջիղը բռնկելով, բախման կու գայ Թրոքսին հետ: Պատուիրակութիւնը Թրոքսինի բաժանմունքէն դուրս կու գայ մասամբ ընկճուած:

Պատուիրակութիւնը ձեռք կ'առնէ վերադառնալու ճանապարհ, խորապէս ազդուած Թրոքսինի անբարեխիղճ ճշտումներէն եւ կոպիտ վերաբերմունքէն:

Պատուիրակութիւնը երբ կը ժամանէ Պարս, Սիւնիքը կը ձերբակալուի, առանց որեւէ բացատրութեան երկու ոստիկաններու ընկերակցութեամբ կը տարուի Պարսն: Գաղտնի զապող մաւ մը դրուելով դուրս կը բշտի երկրէն, իսկ միւս ընկերներուն կ'ար-

տօնուի մեկնիլ Թիֆլիս: 1921 թուականի վերջերը ընկճուած վիճակով՝ գաւազանին յենած Սիւնիքը մտաւ Իզմիրի հնչակեան 6-րդ գունդի շտապին մէջ, իր ներկայութիւնը Իզմիրի մէջ, մեծ անակնկալ մը եղաւ:

Կովկասէն աքսորուած ընկ. Սիւնիքը Կիլիկիոյ մէջ իր աքսորին ընթացքին բազմաթիւ հնչակեաններու հիւրը դարձաւ:

Իզմիրի մէջ կ'որոշուի կազմել Երջանային Ժողով եւ յառաջացնել Երջանի Գործադիր Մարմին: Ընկեր Սիւնիքի մտքին մէջ լայն տեղ գրաւած էր Ռիլլընեան սահմաններով Տաճկահայաստանի ազատագրութեան մասին Յուշագիր մը տալ Սիւնիքի Նահանգներու նախագահին եւ առանձնապէս խնդրել, որ նախագահը բարեհաճի հանգուցեալ նախագահ Վուրու Ռիլլընի սահմանազօած հայկական նահանգները ազատագրել եւ կցել Խորհրդային Հայաստանին:

Իզմիրի մէջ կայացաւ Երջանային Ժողովը եւ Գործադիր Մարմինը կազմուեցաւ հետեւեալ աչքառու ընկերներով՝ Պետրոս Յովնանեան, Հմայեակ Քէչէճեան, Գաբրէլ Բերկեան, Հայրապետ Այնապեան եւ Լեւոն Չաքարեան: Երջանային Ընդհանուր Պատգամատարական Ժողովը Պոլիս կայանալիք Հնչակեան կուսակցութեան Ընդհանուր Պատգամատարական Ժողովին մասնակցելու համար երկու ներկայացուցիչներ ընտրեց եւ ժողովը փակուեցաւ խանդավառ տրամադրութեան ներքե:

Լուրջ եւ համախոհ ընկերներով բաղկացած Գործադիր Յանձնախումբի անդամներէն մեծ մասը Իզմիրի Առաջնորդարանի քաղաքական, ուսումնական եւ տնտեսական խորհրդի անդամներ ըլլալով, սկիզբները շատ մտերմիկ գործակցութիւն մը յառաջացաւ կուսակցութեան եւ Առաջնորդարանի մարմիններու միջե:

Հասարակութիւնը անտեղեակ վարագործի ետեւ խաղցում քաղաքական վտանգատը խաղերէն, տարուած էր իր առօրեայ զբաղմունքներով: Հայր եւ յոյներ մեծ թափով կ'ուճեցան արհեստի եւ վաճառականական ասպարէզները: Կարճ ժամանակի ընթացքին ոմանք դարձան միլիտանտներ:

Յանկարծ գայրոյթ մը բարձրացաւ յունական թերթերու մէջ: Ֆրանսա Ատանայի մէջ կուտակած ռազմամթերքը փոխանցած էր բեմապահներուն այն ատեն, երբ յունական գրաման բանակը Կոստանդինուպոլիս (թագաւոր) եւ Վենիզելոսական թերթերու բաժնուած՝ ռազմաճակատը վերածեր էին քառի:

Հնչակեան Գործադիր գումարեց կարեւոր ժողով: Ընկեր Սիւնիքը քաղաքական կացութեան մասին տուաւ ընդարձակ գեկուցում: Ան մտայ գոյններով ներկայացուց կացութիւնը եւ ընկերները ինքզինքին գտան անակնկալի առջե:

Որոշուեցաւ տեսակցիլ Իզմիրի Առաջնորդ Գործեան եպիսկոպոսին հետ եւ որոնել ինքնապաշտպանութեան միջոցներ:

Իզմիրի մէջ կար Գաշնակցական ակումբ մը եւ Չէրքէզներու պաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէն: Յարմար կը տեսնուի նախ հանդիպիլ չէրքէզներու հետ, որոնք տարուած էին թրքատեսութեամբ: Չէրքէզները Իզմիրի շրջանին մէջ տեսանելի թիւ ունէին: Չէրքէզներու Կեդրոնական Կոմիտէն ամբողջ կազմով եկաւ հնչակեան ակումբը: Անոնցմէ ոմանք կը խօսեին ռուսերէն: Չէրքէզները խոր թշնամութեամբ լեցուած էին թուրքերու դէմ եւ սակայն քանի որ Իզմիրի կացութեան տեղը յունական բանակն էր, ոչինչ կարելի էր ընել երբ մասնաւոր իրենց ժողովուրդը զինաթափուած էր: Չէրքէզները որոշեցին գաղթել Կիլիկիոս եւ անկից երթալ իրենց մայր հայրենիքը Վրաստան:

Առաջնորդը իր նախագահութեան ներքեւ «մեծամեծ»-երու ժողով մը գումարեց, հրաւիրելով հայ քաղաքական կուսակցութիւններէն երկու-ակնը ներկայացուցիչներ, Սիւնիքը հակառակեցաւ այդ ժողովին եւ չմասնակցեցաւ:

Կուսակցականներու ձայնը խեղդուեցաւ մեծամասնութեան, որոնցմէ ոմանք հաւաստիացուցին այս ու այն յոյն ժեներակներու պատգամները եւ եզրակացուցին, որ «Իզմիրին որեւէ վտանգ չի սպառնար շնորհիւ յոյն քաջարի բանակին»:

Այն ատեն Իզմիր կը գտնուէր գորավար Թրոքսին: Ըստեցաւ թէ այս մարդը թեկն տակ գտնուող հայկական խումբը ներքին գաւառներու մէջ յունական բանակին օժանդակելու պաշտօնի տակ զբաղուած է խառնակութիւններով: Թրոքսինը նպատակին մարդը չէր:

Ամերիկայի նախագահին յղուելի յուշագիրը լրանալէն անմիջապէս յետոյ Սիւ-

նիքը մեկնեցաւ մասնաճիւղերը եւ հասաւ մինչեւ Պալքէսիր: Վտանգի մը պահուն, կ'ըսէր Սիւնիքը, Իզմիրի հայութիւնը գուցէ կարենայ տախտակի մը կտորիկ չոքիլ եւ ինքզինքը նետել Յունաստան, եւ սակայն գաւառի հայութիւնը բացարձակօրէն պիտի կտատուի:

Պալքէսիրի հնչակեան մասնաճիւղը հակառակ Սիւնիքի կամքին կը սարքէ հրապարակային ժողով Ազգ. վարժարանի սրահը: Ընկերուի Հեղիփսիմէ Բրուտեանը, որ ուսուցչուի պաշտօն կը վարէր, կ'ատենապետէ: Հարկադրանքներով Սիւնիքը բեմ կը հաննէ:

Սիւնիքի անունն ու հնայքը Պալքէսիրի ամբողջ հայութիւնը կը բերէ ժողովի: Բեմախօսը ուռուցիկ բառերով ժողովուրդը հնայեւ յելու եւ ունայն ծափեր խլելու մարդը չէր. չէր ցանկար խօսիլ, իսկ երբ խօսէր, միջազգային խնդիրներու ամէն մէկ թնճով հմտութեամբ կը քակէր եւ մերկ իրականութիւնը կը ներկայացնէր հասարակութեան: Որպէս եզրակացութիւն իր հմտութեւ պահիտութեան, ընկ. Սիւնիքը Պալքէսիրի հայութեան կը հրահանգէ, որ ժամ առաջ մեկնի Իզմիր կամ Պոլիս: Ժողովուրդը սրահէն կը մեկնի ծանր մտահոգութիւններով:

Միւս առաւօտ Պալքէսիրի յունական ոստիկանները Սիւնիքը կը փնտնեն... Ան Նոյն իրիկունը անհրաժեշտ եղած հրահանգները մասնաճիւղի վարչութեան տալէն ետք գնացքը կ'առնէ եւ կը մեկնի Իզմիր: Ընկեր Սիւնիքը արդեն լքած էր Պալքէսիրը:

Համադրեց՝ Ա. Շ. (Շար. 2)

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՈՒՆԵՐ

## Ս. ՍԱՐԳՍԵԱՆ-Ի. ԱԼԻԵՒ ՅԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ղարաբաղեան հիմնախնդրի բանակցութիւններուն շուրջ առակցեալին թեկուծը հնարաւոր է որ տեղի ունենայ այն հանդիպման ընթացքին, որ պիտի կայանայ Յայաստանի եւ Ատրոպայեանի նախագահներ Սերժ Սարգսեանին եւ Իլիամ Ալիեւին միջեւ, Սեն Փեթերսպուրկի մէջ»: Այսպիսի կարծիք յայտնեց ԵԱՀԿ Մինսքի խումբի ամերիկացի համանախագահ Մեթիու Պրայզալ: Վերջինիս համաձայն, պաշտօնական Մոսկուան եւ Ուաշինկթընը միակարծիք են ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցով:

«Ես միշտ ըսած եմ, որ ինչ կը վերաբերի Վրաստանին, այդ հարցով մենք բարդ յարաբերութիւններ ունինք Ռուսիոյ հետ, սակայն Ղարաբաղի հարցով մեր կապերը դրական են», ըսաւ Պրայզալ, որ աւելցուց, թէ անհրաժեշտ է լեռնային Ղարաբաղի հակամարտութեան շուրջ բանակցութիւնները շարունակել ԵԱՀԿ Մինսքի խումբի շրջանակներէն յետոյ:

«Ինչ կը վերաբերի Ղարաբաղին եւ այլ տարածքներու, ապա անոնք աստիճանաբար կը վերադարձուին Յայաստանին, գաղթականներուն հետ: Սակայն Ատրպայեանի նախագահ Իլիամ Ալիեւը Մոսկուայի մէջ յայտարարեց, թէ նախ եւ առաջ պէտք է գտնուի Յայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը իրարու կապող միջանցք: Այս դեպք յառաջ մեծ քայլ մըն է: Ալիեւ խօսեցաւ Նաեւ Ղարաբաղի բնակչութեան ինքնավարութեան իրաւունքի մասին», ըսաւ ԵԱՀԿ Մինսքի համանախագահներէն Մեթիու Պրայզալ:

«Այժմ ան (Ալիեւ) կը խօսի ինքնավարութեան իրաւունքի մասին: Ան իր ազգը կը նախապատրաստէ բաւական բարդ զինամտերու, որոնք, յոյսով մը, տեղի կ'ունենան», դիտել տուաւ ամերիկացի համանախագահը:

# ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՄԱՏՐԻՏ ԿԸ ՄԵԿՆԻ

Երրօրեայ խորհրդարանի կոմիտէի 119-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով, Մայիս ամսուան 12 եւ 13-ին Մատրիտ կ'այցելէ Յայաստանի արտաքին գործոց նախարար Էտաւարտ Նալբանտեանը:

# ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՈՒՆԵՐ

## ՊԸՐՐԻ. «ՏՈՐԱՅԻ ՅԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՍԱԲԱՆԵՑ ԹԱԷՖԻ ՅԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ»

Խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրի, Սըսայլեհի իր քնակարանին մէջ մամուլի ասուլիս մը սարքելով, հրապարակեց Ազատագրում եւ Բարգաւաճում խորհրդարանական պլոքին ընտրական յայտագիրը, միաժամանակ յայտարարելով Յարաւային Լիբանանի մէջ Յրգայալայի եւ Ազատագրում եւ Բարգաւաճումի թեկնածուներուն անունները, ինչպէս նաեւ Պէրրիի երկրորդ, Պաշալպա-Յերմէլ եւ Արեւմտեան Պեքայի ընտրաշրջաններուն մէջ Անալ շարժումի թեկնածուներուն անունները:

Պըրրի հաստատեց Թաւֆի համաձայնութեան յանձնառութիւնը, ըսելով, թէ «Թաւֆի համաձայնութեան համախոր գտնուեցան լիբանանցիները եւ դարձաւ լիբանանեան սահմանադրութիւն: Ընդդիմութիւնը, ամբողջ ընդդիմութիւնը, եւ ան կը խօսիլ թղորին անունով, յանձնառու է Թաւֆի համաձայնութեան, սակայն պարտիքը գործադրել անոր կէտերը»: Ապա, ան աւելցուց. «Իմ համեմ կարծիքով, Տոհայի համաձայնութիւնը լուսաբանեց Թաւֆի համաձայնութիւնը ազգային միութեան կառավարութեան հարցով»:

## 14 ՄԱՐՏԻ ՈՒՇԵՐՈՒ ԴԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆՑ ԺՈՂՈՎ

Երեսփոխան Մարուան Յամատէ բացայայտեց, թէ «14 Մարտի ուշերուն ղեկավարութիւնը հա-

## ԻՄԱՐԱՅԷԼԵԱՆ ԸՆՆԵՄԵԹԸ ՊԻՏԻ ԸՆՆԱՐԿԷ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՆԱՉՈՒՄԸ

Ընթացիկ Մայիս ամսուան 5-ին, իսրայելեան խորհրդարանը (Բընեաթ) քննարկած եւ միաձայնութեամբ որոշում ընդունած է Հայոց Յեղասպանութեան բանձնելը ընդունելու մասին, որմէ ետք պէտք էր յստակ դառնար, թէ խորհրդարանական ո՞ր յանձնախումբը պիտի ընկալէ զայն: Բանձնելը օրակարգ մտցուելու քայլին մինչ այդ դէմ էր միայն կառավարութիւնը: Թրքաւարար հաւանաբար ներկայացուի արտաքին եւ պաշտպանութեան հարցերու յանձնախումբերուն քուտարկութեան:

## ՄԵՐՔԷԼ ԵՒ ՄԱՐՔՈՋԻ ԴԷՄԵՆ ԹՈՒՐԶԻՈՑ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ

Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզին եւ Գերմանիոյ վարչապետուի Անկելա Մերքել, Պերլինի մէջ իրենց հանդիպման ընթացքին, դէմ արտայայտուեցան ԵրուպակաՆ Միութիւն՝ Թորքիոյ անդամակցութեան: Մերքել յայտարարեց, թէ Թորքիա՝ պէտք է Երոմիութեան արտօնեալ գործընկերոջ կարգավիճակ ստանայ եւ ոչ՝ առկին: Սարքոզի ըսաւ, թէ ԵրոպակաՆ Միութեան անդամները պարտին դարձնելու Թորքիոյ դատարար խոստումները տալը եւ կեդրոնաման այդ երկրի համընդհանուր տնտեսական եւ մշակութային դաշտի ծեստորման վրայ:

մընդհանուր հանդիպում մը պիտի ունենայ յառաջիկայ շաբթուան ընթացքին, ներկայացնելու համար հիմնական յայտագիրը, որուն հիման վրայ այդ ուժերը երեսփոխանական ընտրութիւնները պիտի մղեն միացեալ շարքերով: Ընտրութիւնները, որոնց վրայ կը յենի ընտրանքը մէկ, անկախ, արաբական եւ ժողովրդավար Լիբանանի եւ փոքր պետութիւններու եւ շրջանային կապերով Լիբանանի միջեւ»:

## ՂԱՃԱՐԵՆ ԸՎՇՈՒԵԼՈՒ ՅԱՐՑԸ «ԻՄԱՐԱՅԷԼԵԱՆ ԸՆԴՈՉՉԱԿԱՆ ՖԻԼՄ»

«Ղաճարէն (իսրայելեան) հեռացում չկայ Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններէն առաջ, որովհետեւ իրավիճակը կրնայ փոխուիլ խորհրդարանական յառաջիկայ ընտրութիւններուն հետ»: Այս տուեալին վրայ շեշտեց ՄԱԿ-ի մէջ բարձրաստիճան դիւանապետ մը, որ վերջերս հանդիպում ունեցած էր իսրայելացի պետական պատասխանատուներու հետ, լիբանանեան Ղաճար գիւղէն իսրայելեան մօտալուստ հեռացման լուրը տարածուելէն ետք: Ան հաստատեց, թէ որեւէ տրոպիսին չկայ Ղաճարի լիբանանեան մասն հեռացումի վերաբերեալ:

Այս առնչութեամբ դիւանապետական մարզէն հարդորուած տեղեկութիւններուն համաձայն, Ղաճար գիւղէն հեռացման նիւթին արժարժունքը իսրայելացիներուն կողմէ ուրիշ բան չէ եթէ ոչ՝ «քարոզչական ֆիլմերից մը», Իսրայելի վարչապետ Պեդիա-Միս Նեթանիահոփի Միացեալ Նահանգներ այցելութեան առաջ «բարի կամեցողութիւն» ցոյց տալու համար: Ոմանք տղիսկ Նեթանիահոփի Ուաշինկթըն այցելութեան յետաձգումը կը կապեն այդ հարցի դարձանակը ուշացման հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆԸ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՍԲԵՆՈՒԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍԻ ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

**Հանդէսի ԻՑ. հատորին յոյսընձայման առիթով հաճոյք ունին Ձեզ հրաւիրելու հանդիպում գրոյցի մը՝**

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՓԻՈՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

Գլխաւոր գեկուցաբեր՝  
**ՏՈՔԹ. ԵՂԻԿ ԸԵՐԷՃԵԱՆ**  
(Պետական Երեսփոխան)

Հինգշաբթի, 14 Մայիս 2009-ի Երեկոյեան ժամը 7:30-ին, Հայկազեան Համալսարանի Տէրտերեան Հայագիտական Գրադարան, Մէքսիք փողոց, Զանթարի: